

ОСОБЕННОСТИ ОБУЧЕНИЯ ПЕРЕВОДУ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ В СПЕЦИАЛИЗИРОВАННОМ КУРСЕ ФРАНЦУЗСКОГО ЯЗЫКА

Ашхен Давидовна Гюрджинян

ashkhen.gyurjinyan@gmail.com

*Преподаватель кафедры французской и романской филологии,
Государственный университет им. В.Я. Брюсова,
Ереван, Республика Армения*

АННОТАЦИЯ

В статье предпринимается попытка представить особенности обучения переводу фразеологических единиц в рамках профессионального курса французского языка. Рассматривается проблема эквивалентного и неэквивалентного перевода фразеологических единиц. Также выявляются особенности перевода частичных эквивалентов. Выявляются трудности перевода прецедентного текста, так как они, как правило, содержат прецедентные высказывания и фразеологические единицы. Прецедентные высказывания рассматриваются с точки зрения усвоения лексики носителями языка. Представлены первичные и вторичные виды замены, которые обосновываются типичными примерами. В общих чертах представлены стратегии перевода, такие как калькирование, описание, модуляция, опущение непереводаемого компонента, замена другим компонентом, компенсация, дополнение, объединение и другие.

Ключевые слова: эквивалентный перевод, прецедентный текст, реалия, калькирование, адаптация, метатеза, лакуна.

Ներածություն

Ֆրանսերենի մասնագիտական դասընթացում առանձնակի նշանակություն ունի դարձվածային միավորների թարգմանության ուսուցման հիմնախնդիրը: Դարձվածային միավորները ներկայացնում են խոսքի տարբեր ոճեր, կարող են աչքի ընկնել վառ հուզականությամբ, արտացոլում են կոնկրետ էթնոսի հոգեբանական, մշակութային առանձնահատկությունները, և դրանց թարգմանության ժամանակ տարաբնույթ դժվարություններ են առաջ գալիս:

Հետազոտության հիմնախնդիրները. Ֆրանսերենի դարձվածային միավորները նրա բառապաշարի կարևորագույն բաղադրիչն են: Դրանց թարգմանության, թարգմանության ուսուցման ընթացքում առաջ են գալիս որոշակի դժվարություններ, պայմանավորված համարժեք, ոչ համարժեք դարձվածքների թարգմանության առանձնահատկություններով: Դարձվածային միավորների հատկաբանական ուղղվածությունը պահանջում է կիրառել թարգմանության այնպիսի ռազմավարություններ, մեթոդներ և հնարներ, որոնք մի կողմից, արտացոլում է ընդհանուր բառապաշարի թարգմանության յուրահատկությունները, մյուս կողմից, բացահայտում են դարձվածային միավորների թարգմանության դժվարությունները:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ֆրանսերենի դարձվածային միավորների թարգմանության ուսուցման մեթոդիկայի մշակման անհրաժեշտությամբ:

Հետազոտության նորույթը. բացահայտվում են դարձվածային միավորների թարգմանության ուսուցման առանձնահատկությունները ֆրանսերենի մասնագիտական դասընթացում, տիպական օրինակներով հիմնավորվում է թարգմանության մեթոդների, եղանակների, հնարների ըստ դարձվածային միավորի բովանդակային և գործառական բնութագրերի ընտրության արդյունավետությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը. դարձվածային միավորների իմաստային-գուգորդական դաշտը հաշվի առնելով՝ մշակվել է դրանց թարգմանության ուսուցման համալիր, որի հիմքում ընկած են թարգմանության որոշակի ռազմավարություններ, մեթոդներ, հնարներ:

Հետազոտության գործնական նշանակությունը. հետազոտության արդյունքները կարող են ուսումնասիրության առարկա դառնալ ֆրանսերենի դասախոսների, ուսուցիչների, ֆրանսերեն սովորող (ուսումնասիրող) ուսանողների համար: Դրանք կարելի է կիրառել կուրսային աշխատանքներ, ռեֆերատներ, ավարտական աշխատանքներ պատրաստելիս:

Հետազոտության մեթոդները. բովանդակային վերլուծության, դարձվածքների գործառույթների բացահայտման, ծագումնաբանական, պատմահամեմատական:

Հետազոտության նպատակը.

Մշակել ֆրանսերեն դարձվածային միավորների թարգմանության ուսուցման մեթոդական համակարգ:

Հետազոտության խնդիրները.

1. ուսումնասիրել թարգմանության, թարգմանության ուսուցման ռազմավարությունները, մեթոդները, հնարները,

2. բացահայտել դարձվածային միավորների թարգմանության առանձնահատկությունները, հաշվի առնել ֆրանսերենի մասնագիտական դասընթացի բովանդակությունը,

3. մշակել դարձվածային միավորների թարգմանության ուսուցման մեթոդական համակարգ:

Հետազոտության հիմնախնդիրը լուծելուն նպաստել են մի շարք աշխատանքներ, որոնք նվիրված են դարձվածային միավորների թարգմանության եղանակներին (Ю.Ю. Алексеева, В.Г. Гак, А.В. Кунин), դարձ-

վածային աշխարհի պատկերին (С.М. Кравцов), նախադեպային արտահայտություններին և դարձվածքներին (Е.А. Беспалова), ֆրանսիացիների ազգամշակութային առանձնահատկությունների բացահայտմանը (С.А. Моисеева), ճանաչողական-խոսութային հիմքերին (Л.Г. Золотых):

Դարձվածային միավորների թարգմանության եղանակներն ու հնարները.

Ուսանողն ընդհանուր առմամբ պետք է յուրացնի համարժեք և ոչ համարժեք թարգմանության եղանակներն ու հնարները: Ընդ որում համարժեք թարգմանությունը նույնպես կարող է որոշակի դժվարություններ առաջ բերել, քանի որ այն կարող է լինել ամբողջական, ընտրովի, մասնակի, համատեքստային և պատճենող:

Դարձվածքի համարժեքը թիրախային լեզվում բառակապակցությունների այն միավորն է, որը բոլոր առումներով համարժեք է թարգմանվող միավորին: Նախնական դարձվածային միավորի համարժեքը համապատասխանում է ոչ միայն իմաստով, այլև ոճական գունավորմամբ և պատկերայնությամբ: Դարձվածային համարժեքը թարգմանչին թույլ է տալիս առավել ճշգրիտ փոխանցել օտարալեզու դարձվածային միավորը [4: 95–99]:

Համարժեք դարձվածային միավորների օրինակներ՝

- Il faut battre le fer pendant qu'il est chaud – Երկաթը տաք-տաք են ծեծում:
- Bouc émissaire – քավության նոխազ:
- Chien qui aboie ne mord pas – Հաչան շունը չի կծի:

1. Ամբողջական համարժեքների օգտագործումը թույլ է տալիս պահպանել թարգմանվող միավորի իմաստների ամբողջ համալիրը: Այս դեպքում թիրախային լեզուն պարունակում է փոխաբերական

դարձվածային միավոր, որը բոլոր առումներով համընկնում է բնագի՞ր, թե՞ թարգմանվող լեզվի դարձվածային միավորի հետ ըստ նշանակության, բառակազմության, պատկերավորության, ոճական ուղղվածության և քերականական կառուցվածքի: Օրինակներ կարելի է գտնել ֆրանսերեն դարձվածքների առցանց բառարաններում՝ «Les expressions françaises décortiquées, explications sur l'origine, signification, exemples, traductions», «Les 1001 expressions préférées des français»՝

- *tirer les marrons du feu* – կրակից շագանակներ հանել, շատ դժվար գործ անել, որի արդյունքները վայելում է ուրիշը, լինել մուրճի և հեծանի արանքում, լինել այնպիսի վիճակում, երբ վտանգը կամ դժվարությունը սպառնում է երկու կողմից:
- *nager contre le courant* – հոսանքին հակառակ լողալ, դիմադրել, պայքարել այս կամ այն շարժման դեմ:

Նման համարժեքների օգտագործումը թույլ է տալիս առավել ամբողջական վերարտադրել օտարալեզու դարձվածային միավորները:

Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել երկու հանգամանք, որոնք սահմանափակում են նշված համարժեքներից օգտվելու հնարավորությունը: Կարևոր է նշել, որ դարձվածային համարժեքները հազվադեպ են: Ամենից հաճախ դրանք հանդիպում են միջազգային դարձվածային միավորներում, որոնց ստուգաբանությունը թույլ է տալիս դրանք միավորել երեք խմբի մեջ: Դրանք են՝

1) թևավոր խոսքեր, փոխառություններ լատիներենից կամ հունարենից.

Օրինակ՝ *Cueille le jour* – *Carpe diem* – Որսա՛ պահը կամ բառացի «որսա՛ օրը»:

2) դարձվածային գուգահեռներ, որոնք տարբեր լեզուներում միմյանցից առաջացել են իրարից անկախ՝ արտալեզվական ընդհանրությունների (ունիվերսալիաների) ազդեցությամբ: Մարդկային գոյության ընդհանրությունները կամ արտալեզվական ընդհանրությունները, որոնք ընդգրկում են մարդկանց նյութական և հոգևոր կյանքի գրեթե բոլոր ոլորտները, որոշում են պատկերների համընկնումը, դրանց ուղղության նմանությունը:

Օրինակ՝ *Revenir à ses moutons* – վերադառնանք մեր ոչխարներին (վերադառնալ բուն հարցին):

3) դարձվածային փոխառություններ ժամանակակից լեզուներից, որոնք հասկացություններ են փոխանցում համընդհանուր և ընդհանուր շատ լեզվական համայնքների [13: 80]:

Օրինակ՝ *mettre la barre haut* – բարձր նշաձող սահմանել: Սա ներկայումս լայնորեն տարածված է թե՛ արևմտյան լեզուներում և թե՛ հայերենում (կառավարչական կամ բիզնես ոլորտներում, այլուր):

Համեմատվող լեզուներում կան ձևով նման, բայց բովանդակությամբ տարբեր դարձվածային միավորներ, որոնք հետազոտելիս լեզվաբանները գործածել են տերմինաբանական տարբեր անվանումներ՝ «կեղծ համարժեքներ», «միջլեզվական դարձվածային համանուններ» «կեղծ ինտերնացիոնալիզմներ», «կեղծ գուգահեռներ» և այլն, որոնք ըստ էության «թարգմանչի կեղծ բարեկամներն են»: Օրինակ՝ *chercher midi à quatorze heures* – ջինջ երկնքում ամպ փնտրել, պարզ բաները բարդացնել, բառացի՝ «կեսօր փնտրել ժամը տասնչորսին», *mettre la main à la pâte* – մասնակցել, օգնել գործին, բառացի՝ «ձեռքը դնել խմորի մեջ»:

Ընտրովի համարժեքների պարագայում ենթադրվում է թիրախային լեզվում համապատասխան դարձվածային միավորի երկու կամ ավելի համարժեքների առկայություն, որոնցից թարգմանության համար

ընտրվում է լավագույնը կամ որևէ մեկը, եթե դրանք համարժեք են: Ընտրովի համարժեքների օգտագործումը թարգմանչին թույլ է տալիս ոչ միայն ընտրել լավագույն տարբերակը, այլև բազմազանություն մտցնել նույն դարձվածային միավորի թարգմանության մեջ, որը հեղինակը բազմիցս գործածել է նույն տեքստում: Համարժեքի ճիշտ ընտրությունը հնարավորություն է տալիս արտացոլելու դարձվածային միավորների ոճական բազմազանությունը: Ա. Բարլեզիզյանի Դարձվածքների և արտահայտությունների ֆրանսերեն-հայերեն բառարանում այս տարբերակների համապատասխանությունները, օրինակ, միմյանցից բաժանվում են ստորակետով, եթե դրանք հայերենի հոմանիշներ են, օրինակ՝ *avoir la main heureuse* – հաջողակ՝ բախտը աջ լինել, ձեռքը թեթև լինել [1: 162] կամ ստորակետով, եթե պետք է տարբերակել ֆրանսիական դարձվածային միավորի իմաստը թարգմանելիս, օրինակ՝ *faire la sourde oreille* – խուլ ձևանալ, չլսելու տալ, իրեն անտեղյակ մարդու տեղ դնել [1: 194]: Ընտրովի համարժեքների թվում կան ինչպես լրիվ, այնպես էլ մասնակի համարժեքներ:

Մասնակի համարժեքների առումով պիտի ասել, որ համարժեքության այս տեսակը չի նշանակում իմաստի փոխանցման որևէ անավարտություն, այլ միայն բառային, քերականական, բառա-քերականական անհամապատասխանություններ է պարունակում: Դրանք կոչում են «հարաբերական համարժեքներ» և մասնակի ոճական համարժեքներ [9: 29]:

Անդրադառնանք այն պատճառներին, որոնք առաջացնում են որոշակի անհամապատասխանություններ մասնակի համարժեքների մեջ: Նշենք դրանցից երկուսը.

– տարբերություններ բառային միավորների իմաստային ծավալի մեջ: Բնորոշ օրինակ է հայերեն «մատը մատին չտալ» դարձվածքը և

ֆրանսերեն *ne bouger plus d'un pouce* արտահայտությունը: Թեև երկուսն էլ արտաքուստ փոխանցում են անգործության գաղափարը, հայերեն տարբերակը հաճախ ենթադրում է նաև անտարբերություն կամ ծուլություն, մինչդեռ ֆրանսերեն դարձվածքը առավելապես արտահայտում է ֆիզիկական անշարժություն՝ առանց իմաստային այդ նրբերանգների:

– հոմանշային հարաբերությունների տարբերություն: Օրինակ՝ հայերեն «գլուխը (կամ ճակատը) պատին խփել» և ֆրանսերեն *battre / donner / heurter de la tête contre les murs* դարձվածքները արտահայտում են հուսահատություն կամ անիմաստ գործողություն, սակայն տարբեր լեզուներում օգտագործվող հոմանիշ բայերը (*battre, donner, heurter*) տարբերվում են իրենց ոճական երանգով և ինտենսիվությամբ: Սակարող է բարդացնել թարգմանությունը՝ պահանջելով համատեքստային ճշգրիտ ընտրություն:

Համարժեք թարգմանության դեպքում հաղորդագրությունը փոխանցվում է ճշգրտորեն՝ պահպանելով թարգմանվող լեզվի լեզվական և ոճական նորմերը:

Ակնհայտ է, որ համարժեք թարգմանություն ապահովելու ընթացքում դարձվածային միավորները հանդես են գալիս որպես բառապաշարի որոշակի բաղադրիչ, և հատկապես դրանց թարգմանության ժամանակ շատ դժվար է բառացի թարգմանություն իրականացնել: Մի կողմից, խնդիր է դրվում, եթե հնարավոր է դարձվածային միավորը թարգմանել համարժեք դարձվածային միավորով: Մյուս կողմից էլ խնդիր է դրվում, առաջնային համարել թարգմանվող դարձվածային միավորի իմաստը ճիշտ հաղորդելը: Կարևոր է նաև մշտապես հաշվի առնել ևս մի հանգամանք, թե տվյալ խոսքային իրադրությունում դարձվածային միավորի թարգմանությունը ինչքանով է նպաստում կամ խոչընդոտում հաղորդակցությանը:

Հատկանշական է այն, որ դարձվածային միավորների թարգմանությունը գեղագիտական բավականություն է պատճառում ուսանողներին, որը նպաստում է տվյալ բառամիավորի յուրացմանը և մտապահմանը, բանավոր և գրավոր խոսքում ճիշտ օգտագործմանը: Չնայած դարձվածային միավորների յուրացման գործընթացը դառնում է հաճելի, սակայն այն նաև մեծ ճիգեր և ջանք է պահանջում:

Դարձվածային միավորների յուրացման գործընթացը հոգեբանական առումով բարենպաստ պայմաններ է ենթադրում, քանի որ ուսանողը, հաղթահարելով որոշակի դժվարություններ, յուրացնում է լեզվակրի հաղորդակցական վարքագիծը, մտածելակերպը, լեզվամտածողության առանձնահատկությունները:

Կարևոր է նշել, որ թե՛ համարժեք և թե՛ ոչ համարժեք թարգմանության համար ուսանողը պետք է ընթերցի ոչ միայն ֆրանսերեն, այլև մայրենի լեզվով դարձվածային միավորներով հարուստ գեղարվեստական ստեղծագործություններ:

Նախադեպային դարձվածային միավորներ

Կարևոր է հստակեցնել, թե գրական ի՛նչ աղբյուրներից պետք է ընտրվեն դարձվածային միավորները և ի՛նչ հաջորդականությամբ թարգմանվեն: Ակնհայտ է, որ միջազգային համարվող դարձվածային միավորների թարգմանությունը առանձնակի դժվարություն չունեն: Թարգմանական դժվարություն են ներկայացնում այն դարձվածային միավորները, որոնք վերցվում են բանահյուսությունից կամ գեղարվեստական գրականությունից, քանի որ այդ պարագայում մենք ավելի հաճախակի ենք ստիպված լինում հաղթահարել նախադեպային տեքստի թարգմանության դժվարությունները: Ինչպես հայտնի է ընդհանուր լեզվաբանությունից, նախադեպային տեքստը լեզվամշակութային տվյալ հանրության անդամներին հասկանալի ասությո է, որ «հղվում

է հաղորդակցության ընթացքում որոշակի արտահայտությունների կամ խորհրդանիշերի միջոցով» [7: 106–118]: Նախադեպային տեքստերում հանդիպող դարձվածային միավորների թարգմանությունը կրկնակի դժվարություն է ներկայացնում, քանի որ մի կողմից, խնդիր է դրվում՝ հասկանալ նախադեպային տեքստը, մյուս կողմից խնդիր է դրվում՝ յուրացնելու ինչ-որ առումով նախադեպային դարձվածային միավորը: Նախադեպային դարձվածային միավորները հաստատուն արտահայտություններ են, որոնք լայնորեն հայտնի են ազգային-լեզվամշակութային տիրույթում և որոշակի արժեք ունեն: Նախադեպային դարձվածային միավորները թարգմանելու համար անհրաժեշտ է բացահայտել նախադեպային իրադրությունը, անունը, դեպքը և այլն: Դարձվածային միավորների բաղադրիչ նախադեպային անունների այսպիսի խմբավորում է արվել.

1) դիցաբանությանը, հնագույն էպոսներին ստուգաբանորեն կապված դարձվածային միավորներ՝ *ouvrir la boîte de Pandore* – Պանդորայի տուփը բացել, *être dans les bras de Morphée* – Մորփեոսի գիրկն ընկնել,

2) Աստվածաշնչից ծագած արտահայտություններ՝ *le baiser de Judas* – Հուդայի համբույր, *jeter la première pierre* – առաջին քարը նետել,

3) դարձվածային միավորներ, որոնք վերաբերում են գիտելիքի այլ ոլորտների՝ ֆիզիկա (*la formule du binôme de Newton* – Նյուտոնի երկանդամը), հոգեվերլուծություն (*le complexe d'Œdipe* – Էդիպյան բարդույթ), արվեստ (*jouer les Don Juan* – Դոն Ժուանի դեր խաղալ, հմայել, գայթակղել) [5: 29–48]:

Այստեղ թարգմանության արդյունավետ ռազմավարություն է նախադեպային դարձվածային միավորը թարգմանելիս առանձնացնել նախադեպային անունը, նախադեպային իրադրությունը: Պետք է շեշ-

տադրել դարձվածային միավորի կիրառման գործաբանական ենթատեքստը, այսինքն՝ հստակեցնել դարձվածքի կիրառման պատմական, մշակութային, սոցիալական և այլ ենթատեքստերը:

Նախադեպային արտահայտությունների թարգմանությունը ենթադրում է ճիշտ պատկերացում ունենալ լեզվակիրների մտային կառույցների կամ շաբլոնների, այլ կերպ ասած՝ լեզվակիրների հենքային գիտելիքների մասին: Նախադեպային արտահայտությունների թարգմանությունն ուսուցման գործընթացը դարձնում է հետաքրքիր: Դրանք ուսանողներին օգնում են վերաիմաստավորելու Ֆրանսիայի պատմությունը, ավանդույթներն ու սովորույթները, ժողովրդական բանահյուսությանը, բացահայտելու ֆրանսիացիների մտածելակերպի, լեզվամտածողության առանձնահատկությունները:

Ինչպես հայտնի է, ֆրանսիական գրականությունը հարուստ է նախադեպային արտահայտություններով և դարձվածքներով: Ուսանողները պետք է գիտակցեն, որ անհրաժեշտ է պարբերաբար ընթերցել դասական և ժամանակակից ֆրանսիացի հեղինակների գործերը: Համացանցում կարելի է գտնել մեծ քանակությամբ նախադեպային դարձվածային միավորներ և արտահայտություններ, որոնք վերցրած են ֆրանսիական գրականությունից: Տիպական օրինակներին ծանոթանալն ուսանողներին օգնում է ճիշտ պատկերացում կազմելու նախադեպային դարձվածային միավորների մասին: Օրինակներ՝ *le sommeil du juste* – խաղաղ, խոր քուն, որ վերցված է Վիկտոր Հյուգոյի «Թշվառները» վեպից, *le paysan du Danube* (բառացի՝ դանուբցի գեղջուկ) – կոպիտ, բռի մարդ, որը խոսում է ինչ պատահի. հայտնի է Լաֆոնտենի առակից, *rire jaune* – շինծու, բռնազբոսիկ ծիծաղել, որը հանդիպում է Մոլիերի «Մարդասոյացը» կատակերգության մեջ:

Դարձվածային միավորների թարգմանության ռազմավարությունը

Դարձվածային միավորների թարգմանության ուսուցման գործընթացում կարելի է կիրառել «վերևից ներքև» (*de haut en bas*) և «ներքևից վերև» (*de bas en haut*) ռազմավարությունները: Այսինքն՝ կարելի է ուսանողներին առաջարկել որևէ դարձվածային միավոր, և նրանք պետք է փորձեն տարբեր աղբյուրների ներգրավմամբ բացատրել տվյալ դարձվածային միավորը: Կամ տրվում է որևէ տեքստ, որը պարունակում է այս կամ այն դարձվածային միավորի մանրամասն բացատրությունը: Այդպիսի աշխատանքից հետո դժվար չէ ճիշտ թարգմանել դարձվածային միավորը:

Դարձվածային միավորները բաժանվում են չորս խմբի՝ համարժեքություն, մասնակի համարժեքություն, ոչ համարժեքություն և դարձվածային համանմանություն: Համարժեք դարձվածային միավորների թարգմանության ժամանակ ավելի լավ է օգտվել պատճենման հնարավորությունից: Ոչ համարժեք դարձվածային միավորները կարող են թարգմանվել տարբեր եղանակներով՝ ինչպես պատճենմամբ, այնպես էլ նկարագրությամբ և կամ բառային եղանակով:

Մեկ այլ մոտեցմամբ առանձնացվում են դարձվածային միավորների թարգմանության հետևյալ եղանակները՝ պատճենում, հարմարեցում, տրասնպոզիցիա և բառացի թարգմանություն: Դարձվածային միավորի պատճենումը օգտագործվում է, երբ անհրաժեշտ է պահպանել դարձվածային միավորի ազգային պատկերային հիմքերը այլ լեզվով թարգմանելիս: Այս դեպքում փաստորեն բառացի թարգմանություն է արվում: Օրինակ՝ *en tête à tête* – գլուխ գլխի, երես առ երես, *se casser la tête* – գլուխ կոտրել, *vouloir, c'est pouvoir* – ցանկանալը կարելնալ է, *La fortune sourit aux audacieux*. – Բախտը ժպտում է խիզախներին:

Դրափոխություն

Դարձվածային միավորների տրասնպոզիցիան կամ դրափոխությունը կարող է լինել առաջնային և երկրորդային [11: 118–127]:

Առաջնային դրափոխությունը [3: 354] ելքային փոփոխական արտահայտության կամ նախադասության վերաձևակերպումն է, որի պարագայում նոր կազմավորումները պահպանում են սկզբնական կառուցվածքը [11: 118–127]: Օրինակ՝ *être sur des braises* «նստել կարծես վառվող ածուխի վրա» դարձվածային միավորի հիմքում ընկած են «համբերելուց ինքնատիրապետումը կորցնել» և «անհանգստությունից իրեն կորցնել» ենթիմաստները: Հայերենում սրա համարժեքն է «փշերի վրա լինել» [2: 1328]: Առաջնային դրափոխության տիպական օրինակ է *voir le fond du sac* արտահայտությունը, որը նշանակում է «ներթափանցել իրերի էության մեջ», որն ի սկզբանե նշանակում էր «տեսնել պարկի հատակը»:

Երկրորդային դրափոխության դեպքում դարձվածային միավորները մի գործառական դասից անցում են կատարում մեկ այլ դասի: Տեղի է ունենում դարձվածային միավորի սկզբնական իմաստի փոփոխություն, որն ուղեկցվում է դրանց կառուցվածքի փոփոխությամբ [11: 118–127]: Երկրորդային դրափոխության տիպական օրինակ է գեղջված դրափոխությունը, երբ շարահյուսական կառուցվածքը կրճատվում է իմաստի փոփոխության հետևանքով: Օրինակ՝ *conduire qu'au doigt et à l'œil* – բառացի՝ «ղեկավարել մատով և աչքով», այսինքն՝ անվերապահորեն հնազանդվել՝ հնարավորինս ճշգրտորեն կատարելով հրամանները, որից էլ՝ *Au doigt et à l'oeil!*՝ «մատով և աչքով» – ճշգրտորեն:

Իրակութային և լակունար դարձվածային միավորների թարգմանությունը

Առանձնահատուկ նշանակություն ունի իրակութային դարձվածային միավորների թարգմանությունը, քանի որ դրանք հիմնականում

անհամարժեք բառապաշար են ներկայացնում: Թարգմանության պրակտիկայում ընդունված է անհամարժեք դարձվածային միավորները թարգմանել պատճենման, նկարագրության, մոդուլյացիայի, չթարգմանվող բաղադրիչը բաց թողնելու, մեկ այլ բաղադրիչով փոխարինելու և փոխհաստոցման, լրացման, միավորման և այլ եղանակներով:

Դարձվածային միավորների թարգմանության ուսուցման ժամանակ առանձնակի դժվարություն են ներկայացնում այն իրակությունները և լակունաները (լատ. *lacuna*՝ «բացթողում, բաց տեղ»)՝ տեղանուններ, անձնանուններ, կերակրատեսակներ, ազգային հագուստի տեսակներ և այլն, ժողովրդանուն (Էթնոնիմ) բաղադրիչներով ֆրանսերեն դարձվածային միավորները, քանի որ դրանք ազգամշակութային նշույթավորում ունեն և ընդհանուր գծերով ներկայացնում են ֆրանսիացիների դարձվածային աշխարհի պատկերը: Հատկանշական է, որ դարձվածային միավորների ուսումնասիրությունը կարող է օգնել ուսանողին բացահայտելու ֆրանսիացիների մտածելակերպի, բնավորության, լեզվամտածողության առանձնահատկությունները:

Յուրաքանչյուր լեզվի իմաստաբանական տիրույթում առանձնահատուկ տեղ են գրավում դարձվածային միավորները, քանի որ դրանք ներկայացնում են տվյալ ժողովրդի հենքային, հանրամշակութային գիտելիքները, փորձը: Ասվածից հետևում է, որ ֆրանսիական էթնոմշակութային աշխարհի պատկերի խոսքայնացումը կարելի է ներկայացնել այնպիսի օրինակների միջոցով, որոնց կառուցվածքում առանձնահատուկ տեղ է գրավում հատկանվանական բաղադրիչը, որը ներկայացված է տեղանունների անվանումներով, էթնոմշակութային տարածված անձնանուններով, ինչպես նաև պատմական, գրական անուններով և մականուններով: Օրինակ՝ *être sorti de la côte de Charlemagne* (բառացի՝ Կառլոս Մեծի կողից դուրս եկած լինել), դարձվածային միա-

վորը ներկայացնում է մարդու՝ իր անձը չափազանց բարձր գնահատելու, մեծամտության և հպարտության գաղափարը: Այն հիմնված է պատմական անձի՝ Կառլոս Մեծի հեղինակության և «աստվածային ծագման» խորհրդանշական ընկալման վրա: Թեև բառացի համարժեք չկա, բայց իմաստային և գործառնական առումով մոտ են հետևյալ միավորները՝ ինքն իրեն աստված է համարում, գլուխը երկնքից վեր է, ինքը հողից չի կամ գետնից չի բարձրացել, թագավորի պես է պահում իրեն: Բերենք ևս մեկ օրինակ՝ Marquis de Carabas դարձվածքը (մարկիզ Կարաբաս), որի ծագումը հստակորեն կապված է Շառլ Պերոյի «Կոշկավոր կատուն» (*Le Chat botté*) հեքիաթի հերոսի անվան հետ: Այսօր այն նշանակում է մարդ, որ ներկայացնում է իրեն որպես հարուստ կամ ազնվական, բայց իրականում ոչինչ չունի: *En avoir dans la Sorbonne* դարձվածքը (բառացի՝ «Սորբոնում ինչ-որ բան ունենալ») ֆրանսերեն խոսակցական արտահայտություն է, որը նշանակում է «խելք ունենալ, խելացի լինել», «գլխում մի բան ունենալ»: Դարձվածքը ձևավորվել է ֆրանսիական բարձրագույն կրթության ամենահեղինակավոր հաստատություններից մեկի՝ Սորբոնի համալսարանի անունով, որը խորհրդանշում է մտավոր գերազանցություն, կրթվածություն և ինտելեկտ: Հայերեն դարձվածանիում «խելք» բաղադրիչով բազմաթիվ դարձվածային միավորներ կան, ինչպես՝ «կարճ խելք», «ձուկի խելք», «վարժապետի խելք», «խելք անել», «խելք բանեցնել», «խելք գտնել», «խելքդ գլո՛ւխդ հավաքիր», «խելքդ կշո՛ր՛ր» [2: 577–578], որոնցից կառուցվածքային և իմաստային նմանություն տեսնում ենք «խելքդ տուն բեր» դարձվածքին:

Դարձվածքները, ինչպես նշում է հետազոտողներից, մեկը ինչ-որ առումով աշխարհի միամիտ պատկերը վերաբրտադրող միավորներ են, որի ուսումնասիրությունն օգնում է ներկայացնելու տվյալ ժամանակաշրջանի ազգային, մտային, մշակութային բնութագրերը [8: 70],

ինչպես նաև ֆրանսիացի ժողովրդի աշխարհընկալումը, նրա ազգային բնավորությունը [12: 22–29]:

Նպատակահարմար է ուսանողներին ներկայացնել ֆրանսերեն դարձվածային միավորների նվազագույն ցանկն ըստ նրանցում առկա ժողովրդանուն (էթնոնիմ) բաղադրիչի:

Անհրաժեշտ է ուսուցման տարբեր փուլերում հստակեցնել ֆրանսերեն նվազագույն դարձվածային միավորների ցանկը նույնպես, այն տրամաբանությամբ, որ դրանք օտարալեզու բառապաշարի կարևոր բաղադրիչ են:

Եզրակացություն

Դարձվածային միավորների թարգմանության ժամանակ դժվարություն է ներկայացնում հատկապես ոչ համարժեք թարգմանությունը, քանի որ դարձվածային միավորները կարող են հանդես գալ որպես հատկաբանություն, իրակություն, լակունա, նախադեպային արտահայտություն:

Դարձվածային համարժեքը թարգմանչին թույլ է տալիս առավել ճշգրիտ փոխանցել օտարալեզու դարձվածային միավորի նշանակությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել ևս մի դժվարություն. դարձվածային միավորը կարող է հանդես գալ որպես փոխաբերություն:

Միջազգային դարձվածային միավորները թարգմանելիս հաշվի է առնվում դրական փոխարկման արդյունավետությունը: Որոշ դեպքերում դարձվածային միավորները հանդես են գալիս որպես «կեղծ համարժեքներ», «միջլեզվական դարձվածային համանուններ» «կեղծ ինտերնացիոնալիզմներ», «կեղծ զուգահեռներ» և այլն, որոնք ըստ էության «թարգմանչի կեղծ բարեկամներն են»:

Թարգմանական դժվարություն են ներկայացնում հատկապես այն դարձվածային միավորները, որոնք բանահյուսությունից կամ գե-

դարվեստական գրականությունից են, քանի որ այդ պարագայում հաճախ հարկ է լինում հաղթահարելու նախադեպային տեքստի թարգմանության դժվարությունները:

Նախադեպային դարձվածային միավորները թարգմանելու համար անհրաժեշտ է բացահայտել նախադեպային իրադրությունը, անունը, դեպքը և այլն:

Դարձվածային միավորների թարգմանության ժամանակ առաջին պլան են մղվում «վերևից ներքև», «ներքևից վերև» ռազմավարությունները, երբ ուսանողը փորձում է ըստ վերնագրի կռահել տեքստի իմաստը կամ հակառակը՝ տեքստը մանրամասնորեն վերլուծելով տեքստի ամբողջական թարգմանություն է անում:

Թարգմանության ընթացքում տեքստի վերափոխումը՝ նախադասությունների, դարձվածքների կամ ամբողջական հատվածների վերաձևակերպումը, կարող է լինել արդյունավետ, քանի որ այն օգնում է ավելի հստակ և նպատակային փոխանցել բովանդակությունը թարգմանվող լեզվով:

Իրակության և լակոնար դարձվածային միավորների թարգմանությունը նույնպես պահանջում է գոյություն ունեցող թարգմանության ռազմավարությունների, եղանակների, հնարների վերանայում, վերաիմաստավորում, դրանց ըստ դարձվածային միավորների բովանդակության և գործառույթների ընտրություն:

ЛИТЕРАТУРА

1. *Բարլեզիզյան Ս.* Դարձվածքների և արտահայտությունների ֆրանսերեն-հայերեն բառարան: – Երևան՝ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018: – 295 էջ:
2. *Բեղիրյան Պ.* Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան: Երևան՝ ԵՊՀ հրատ., 2011: – 1410 էջ:
3. *Նազարյան Ս.Հ.* Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան: – Երևան՝ «Ապոլոն», 1993: – 656 էջ:

4. *Алексеева Ю.Ю.* Способы перевода фразеологических единиц с английского на русский язык // Международный научный журнал «Вестник науки», Т. 4, № 4 (25), 2020. – СС. 95–99.
5. *Беспалова Е.А.* Фразеологизмы мифологического происхождения с компонентом – прецедентным именем: особенности строения и употребления (на примере газетных текстов) // Вестник Томского государственного университета. Филология, 2021, № 69. – СС. 29–48.
6. *Гак В.Г.* Теория и практика перевода. Французский язык / В.Г. Гак, Б.Б. Григорьев. – М.: «Интердиалект+», 1997. – 455 с.
7. *Гудков Д.Б.* [и др.]. Некоторые особенности функционирования прецедентных высказываний // Вестник Московского университета. Серия 9: Филология, 1997, № 4. – СС. 106–118.
8. *Золотых Л.Г.* Когнитивно-дискурсивные основы фразеологической семантики. – Астрахань: Астраханский университет, 2007. – 265 с.
9. *Кравцов С.М.* Картина мира в русской и французской фразеологии (на примере концепта «Поведение человека») / С.М. Кравцов. – Ростов н/Д.: ИПО ПИ ЮФУ, 2008. – 38 с.
10. *Кунин А.В.* О переводе английских фразеологизмов [Электронный ресурс]. – Режим доступа: http://samlib.ru/w/wagapow_a_s/transl-book-kunin.shtml (Дата обращения: 01.06.2025г.).
11. *Ларькина А.А., Парфеньева А.С.* Фразеологический эллипсис во французском языке // Вестник Череповского государственного университета. Филологические науки, 2017, № 1. – СС. 118–127.
12. *Моисеева С.А.* Французский национальный характер в зеркале фразеологии / С.А. Моисеева, И.А. Волошкина; БелГУ // Вестник Томского государственного университета, 2009. – № 321. – СС. 22–29.
13. *Солодухо Э.М.* Теория фразеологического сближения (на материале языков славянской, германской и романской групп) / Э.М. Солодухо. – Казань: Изд-во Казан. ун-та, 1989. – СС. 80–87.
14. *Les expressions françaises décortiquées, explications sur l'origine, signification, exemples, traductions* [Electronic resource]. – Mode of access: <https://www.expres-sio.fr/> (Date of access: Mar 30, 2025).
15. *Planelles G.* Les 1001 expressions préférées des français. Les Éditions de l'Opportun. 16, rue Dupetit-Thouars. 75003 Paris [Electronic resource]. – Mode of access: https://www.academia.edu/35507570/LES_1001_EXPRESSIONS_PR%C3%89F%C3%89R%C3%89ES_DES_FRAN%C3%87AIS (Date of access: Mar 30, 2025).

ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

Ա.Դ. Գյուրջինյան
ashkhen.gyurjinyan@gmail.com

*Ֆրանսերենի և ռոմանական բանասիրության ամբիոնի դասախոս,
Վ.Յա. Բրյուսովի անվ. պետական համալսարան,
Երևան, Հայաստանի Հանրապետություն*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում փորձ է արվում ներկայացնել դարձվածային միավորների թարգմանության ուսուցման առանձնահատկությունները ֆրանսերենի մասնագիտական դասընթացում: Քննության է առնվում դարձվածային միավորների համարժեք, ոչ համարժեք թարգմանության հիմնախնդիրը: Բացահայտվում են նաև մասնակի համարժեքների թարգմանության առանձնահատկությունները: Վեր են հանվում նախադեպային տեքստի թարգմանության դժվարությունները, քանի որ դրանք հիմնականում պարունակում են նախադեպային արտահայտություններ և դարձվածային միավորներ: Նախադեպային արտահայտությունները քննության են առնվում լեզվակիրների բառապաշարի յուրացման տեսանկյունից: Ներկայացվում են առաջնային, երկրորդային դրափոխության տեսակները, որոնք հիմնավորվում են տիպական օրինակներով: Ընդհանուր գծերով ներկայացվում են պատճենման, նկարագրության, մոդուլյացիայի, չթարգմանվող բաղադրիչը բաց թողնելու, մեկ այլ բաղադրիչով փոխարինելու և փոխատուցման, լրացման, միավորման և այլ թարգմանական ռազմավարություններ:

Բանալի բառեր՝ համարժեք թարգմանություն, նախադե-
պալին տեքստ, իրակություն, պատճենում, հարմարե-
ցում, դրափոխություն, լակունա:

SPECIFIC FEATURES OF TEACHING THE TRANSLATION OF PHRASEOLOGICAL UNITS IN A SPECIALIZED FRENCH LANGUAGE COURSE

A. Gyurjinyan

ashkhen.gyurjinyan@gmail.com

*Lecturer at the Department of French and Romance Philology,
Brusov State University,
Yerevan, Republic of Armenia*

ABSTRACT

The article attempts to present the specific features of teaching the translation of phraseological units in a specialized French language course. The issue of equivalent and non-equivalent translation of phraseological units is examined. The particularities of translating partial equivalents are also revealed. The difficulties of translating precedent texts are highlighted, as they usually contain precedent expressions and phraseological units. Precedent expressions are examined from the perspective of vocabulary acquisition by native speakers. Primary and secondary types of substitution are presented, substantiated with typical examples. In general terms, translation strategies such as calque, description, modulation, omission of an untranslatable component, substitution with another component, compensation, addition, combination, and others are outlined.

Keywords: equivalent translation, precedent text, realia, calque, adaptation, metathesis, lacuna.

Информация о статье:

*статья поступила в редакцию 04 июня 2025 г.,
подписана к печати в номер 16 (20) / 2025 – 20.12.2025 г.*